


Ուրախ ձվիկներ. Ձվի դեկորացիա




Ձվերը նախազարդելու հետաքրքիր ու հեշտ տարբերակ է ձվի դեկորացիոն: Այս մեթոդով զարդարված ձվերը հատկապես դուր կգան երեխաներին:

Անհրաժեշտ են՝ պինդ խաշած ձվեր (ցանկալի է սպիտակ), հոլմ ձվի սպիտակուց, նկարազարդ անձեռոցիկներ, վրձին:



Անձեռոցիկի նկարազարդ շերտը առանձնացում ենք (սպիտակ շերտերը չենք օգտագործելու), ապա կտրատում վրայի պատկերները:



Նկարը դնում ենք ձվի վրա, ապա վրձնի օգնությամբ պատկերի վրա և նրա կողքերը քսում ենք ձվի սպիտակուցը:





Արդեն սկարագարդ ձվերը թողնում ենք մոտ 15 րոպե, որպեսզի ձվի սպիտակուլցը չորանա:

